

# ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## Ինչպիսի՞ ֆինանսական աջակցություն է առաջարկում CHLA-ը

Children's Hospital Los Angeles-ը (CHLA) առաջարկում է երկու տեսակի ֆինանսական աջակցություն, որով ձեզ օժանդակություն է ցուցաբերվում այն դեպքում, երբ չեք կարող վճարել հիվանդանոցային վճաների ամբողջական գումարը, քանի որ կա՛մ չունեք առողջապահական ապահովագրություն, կա՛մ ձեր ընտանիքն ունի մեծ բժշկական ծախսեր: Ֆինանսական աջակցության այս երկու տեսակները՝ «Charity Care» (Բարեգործական բուժօգնություն) և «Discounted Care» (Զեղչված բուժօգնություն), ավելի մանրամասն նկարագրված են CHLA-ի ֆինանսական աջակցության քաղաքականության մեջ (ADM 043.0, որը ըստ պահանջի հասանելի է տպագիր ձևով կամ CHLA-ի կայքում՝ <http://www.chla.org>:

Եթե համապատասխանում եք «Charity Care» ստանալու պահանջներին, CHLA-ը չգեղջի ձեր հիվանդանոցային վճարի ամբողջական գումարը շտապ բուժօգնության կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունների համար: Եթե համապատասխանում եք «Discounted Care» ստանալու պահանջներին, CHLA-ը ձեզ զեղչ կառաջարկի նմանատիպ ծառայությունների հիվանդանոցային վճարների համար: Անկախ նրանից, թե որ ծրագրի պահանջներին եք բավարարում, որպես ֆինանսական աջակցություն ստացող հիվանդ՝ ձեզնից չի գանձվի ավելի գումար, քան շտապ բուժօգնության կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ հիվանդանոցային ծառայությունների համար ապահովագրված հիվանդներից «Սովորաբար գանձվող գումարները»:

Նկատի ունեցեք, որ CHLA-ի կողմից առաջարկվող ֆինանսական աջակցությունը կիրառելի է միայն հիվանդանոցային վճարների համար, և ոչ բժիշկների վարձավճարների համար, ովքեր ընդունում են հիվանդներին CHLA-ում: Կապվեք Մանկաբուժության կառավարման խմբի հաճախորդների աջակցության ծառայության հետ (323) 361-2336 ուղղակի հեռախոսահամարով՝ իրենց ծառայությունների համար առաջարկվող ֆինանսական աջակցության մասին տեղեկություններ ստանալու համար:

## Ես իրավունք ունե՞մ ֆինանսական աջակցություն ստանալ CHLA-ից

Եթե դուք ապահովագրված չեք և/կամ ունեք մեծ բժշկական ծախսեր, ապա կարող եք բավարարել «Charity Care» ծրագրի պահանջներին, եթե ձեր ընտանիքի եկամուտը հավասար է Դաշնային աղքատության մակարդակի 350%-ին կամ ցածր է դրանից<sup>1</sup>: Նմանապես, դուք կարող եք ընդգրկվել «Discounted Care» ծրագրում, թե ձեր ընտանիքի եկամուտը բարձր է Դաշնային աղքատության մակարդակի 350%-ից, սակայն հավասար կամ ցածր է 400%-ից:

---

<sup>1</sup> Դաշնային աղքատության մակարդակը թարմացվում է տարեկան կտրվածքով դաշնային կառավարության կողմից և հասանելի է կառավարության հանրային կայքերում:

«Charity Care» կամ «Discounted Care» ստանալու համար դուք պետք է դիմում ներկայացնեք CHLA-ին: Երբ CHLA-ը ստանա ձեր լրացված դիմումը, որոշում կընդունի, թե արդյոք դուք բավարարում եք պահանջներին և ձեզ գրավոր կերպով կձեռնարկի 30 օրվա ընթացքում:

## **Որտեղի՞ց կարող եմ ձեռք բերել դիմումի օրինակ**

CHLA-ի ֆինանսական աջակցության դիմումի անվճար օրինակները, ֆինանսական աջակցության քաղաքականությունը և այս ամփոփագիրը հասանելի են ըստ պահանջի՝ հիվանդանոցի գլխավոր մուտքի մոտ գտնվող Ընդունելության բաժնում, Շտապ օգնության բաժանմունքի գրանցման տարածքում և հիվանդանոցի այլ տարածքներում: Այս նյութերը հասանելի են նաև CHLA-ի կայքում՝ <http://www.chla.org>: Դուք կարող եք նաև պահանջել, որ ձեզ փոստով ուղարկվի անվճար օրինակ՝ զանգահարելով Հիվանդի բիզնես ծառայություններ (800) 404-6627 հեռախոսահամարով:

## **Ինչպե՞ս դիմել**

Դուք կամ ձեր ներկայացուցիչը կարող եք ֆինանսական աջակցության համար դիմել՝ լրացված դիմումը (ներառյալ դիմումի մեջ նշված բոլոր պարտադիր փաստաթղթերը) ներկայացնելով CHLA-ի Հիվանդի բիզնես ծառայությունների գրասենյակ հետևյալ ձևերից որևէ մեկով.

- փոստով կամ անձամբ՝ ուղղված. Patient Business Services  
Mailstop 26  
Children's Hospital Los Angeles  
4650 Sunset Boulevard  
Los Angeles, CA 90027
- էլ. փոստով. [sperez@chla.usc.edu](mailto:sperez@chla.usc.edu)

CHLA-ի անձնակազմը չի կարող աջակցել ֆինանսական աջակցության դիմումի լրացման հարցում, բայց դուք կարող եք դիմումի հետ կապված օգնություն ստանալ Լոս Անջելեսի Սպառողների առողջապահական կենտրոնից (Health Consumer Center of Los Angeles): Այս շահույթ չհետապնդող կազմակերպությունը գտնվում է 13327 Van Nuys Boulevard, Pacoima, CA 91331 հասցեում, և հեռախոսահամարն է՝ (800) 896-3203:

## **Դիմումը հասանելի՞ է անգլերենից բացի այլ լեզուներով**

Ֆինանսական աջակցության քաղաքականության, այս ամփոփագրի և դիմումի ձևի թարգմանությունները հասանելի են իսպաներեն, չինարեն, կորեերեն, վիետնամերեն և արաբերեն լեզուներով: Եթե այլ լեզվով ձեզ աջակցելու համար թարգմանչի կարիք ունեք, ապա օգնության համար դիմեք CHLA-ի անձնակազմի որևէ անդամի:

## **Որտեղի՞ց կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ստանալ**

Եթե լրացուցիչ տեղեկատվության կարիք ունեք CHLA-ի Ֆինանսական աջակցության քաղաքականության մասին, դիմեք Հիվանդի բիզնես ծառայությունների գրասենյակ՝ գանգահարելով (800) 404-6627 հեռախոսահամարով կամ այցելելով Հիվանդի բիզնես ծառայությունների գրասենյակ: